

**ՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹՅՈՒՆԸ Կ. ՊՈԼՍՈՒՄ
ԵՎ ԶՄՅՈՒՌՆԻՍՅՈՒՄ (1567-1860-ական թթ.)**

ԽԱՌԱՏՅԱՆ Ա. Ա.

Վենետիկյան գրատպության մշակութային ավանդույթները շարունակվեցին Օսմանյան Թուրքիայի հայ գաղթօջախներում՝ Կ. Պոլսում և Զմյուռնիայում: Կ. Պոլիսը, մասնավորապես, հանդես է գալիս որպես հայ գրատպության երկրորդ կենտրոն՝ Վենետիկից հետո, Հակոբ Մեղապարտի գործի շարունակության վայր՝ նրանից 55 տարի անց: Արգար դպիրը Վենետիկում իր երկու գրքերը տպագրելուց հետո տպարանը փոխադրում է Կ. Պոլիս: Արդյո՞ք այս տեղափոխությունը կապված էր Հռոմի դավանական անհանդուրժողականության հետ, ինչպես պնդում են որոշ հետազոտողներ¹: Շատ հնարավոր է՝ կաթոլիկ եկեղեցու պետերի կողմից արևելյան եկեղեցիների նկատմամբ XVI դ. 2-րդ կեսին մերթ սիրաշահող և մերթ անզիջում քաղաքականության պայմաններում, թեև Արգարի պարագայում այդպիսի վերաբերմունքի խստացման որևէ փաստ արձանագրված չէ: Բայց փաստը մնում է այն, որ հայ տպագրիչը տեղափոխվեց Կ. Պոլիս, որտեղ կազմակերպված ազգային կյանքով ապրում էր հայության մեջ արդեն բավական հեղինակություն ունեցող գաղթօջախը՝ իրպատրիարքով, բազմահմուտ արհեստավորներով, խոջաներով ու չելեպիներով, իր ազգային ինքնությունը մշակութային ձգտումներով հագեցնող հայ հանրությամբ: Եվ այս իմաստով Կ. Պոլսի ընտրությունը, որպես տպագրավայրի, պատահական չէր կարող լինել, այլ մտածված և հիմնավոր քայլ էր: Ավելացնենք, որ Արգարից առաջ Կ. Պոլսում տպագրության գործին ձեռնարկել էին Բսպանիայից գաղթած հրեաները: 1494 թ. նրանցից Նախմես եղբայրները օսմանների մայրաքաղաքում տպագրեցին Մովսեսի Հնգամատյանը²: Հայերը, ի դեմս Արգար Թոքատեցու, երկրորդն էին Օսմանյան Թուրքիայի հպատակ ազգերի մեջ, որ ձեռնարկեցին գրատպությանը: Երրորդը հույներն էին, որոնք վանական Նիկողեմոս Մետաքսասի ձեռքով 1627 թ. Կ. Պոլսում հիմնեցին

¹Լեռ, Հայկական տպագրություն, հ. 1, Թիֆլիս, 1904, էջ 99: Յարման Ա., Ս. Փրկիչ հիւանդանոցի 180 ամեակին առթիւ Օսմանեան շրջանի տարեգիրքերը, «Ս. Փրկիչ ազգային հիւանդանոց», Ստամբուլ, 2012, էջ 184: Ս. Օրմանյանը ևս նշում է, որ 1565-ին վախճանված «զիջողական» Պիոս IV-ին փոխարինել էր Պիոս V պապը, որի հետ Արգար Թոքատեցին չէր կարող շարունակել իր բանակցությունները (Օրմանյան Ս., Ազգապատում, հ. Բ, Էջմիածին, 2001, էջ 263):

² Желтяков А. Д. Печать в общественно-политической и культурной жизни Турции (1729-1908 гг.), М., 1972, с. 13-14.

տպարան, որը, սակայն, ավերվեց ենիչերիների կողմից՝ ֆրանսիական ճիզվիտների հրահրմամբ³:

Արդ, Աբգարն իր տպարանը հիմնեց Կ. Պոլսի Ս. Նիկողայոս անվամբ երկու եկեղեցիներից մեկի բակում: 1567-1569 թթ. նա տպագրեց 6 գիրք, այդ թվում՝ «Փոքր քերականութին», «Պարզայտումար», «Ժամագիրք» և «Պատարագամատոյց»⁴:

Նրանից հետո Կ. Պոլսում հայ տպագրությունն ընդհատվեց հարյուր տասը տարվա մի ժամանակաշրջանով: Պոլսահայ ազդեցիկ մտավորական, հայկական ու օսմանյան վերնախավերում մեծ հարգանք ու հեղինակություն վայելող Երեմիա Չելեպի Քյումուրճյանը 1677 թ. այստեղ տպագրեց երկու գիրք՝ «Գիրք որ ի մնացորդացն Յիսուս որդւոյն» (Ներսէս Շնորհալու համանուն պոեմից հատվածներ և այլ չափածո կտորներ) և մյուսը՝ իր հեղինակած «Տեղիք» գիրքը, որտեղ նկարագրված են Երուսաղեմի սուրբ վայրերը: Քյումուրճյանն իր տպարանում տպագրել է նաև հայ կրոնական հաստատությունների մի քարտեզ-տեղագույց: Այն կորսված էր համարվում, մինչև գտնվեց վերջերս՝ 1991 թ., Բոլոնիայի համալսարանի գրադարանում⁵: Հազիվ թե կարելի է համաձայնել Լեոյի հետ, որը կարծում է, թե նրա «կարճատև ու աննշան գործունեությունը հիշատակության արժանի չէր լինի, եթե նրա պատրաստել տված մայրերը նույն դարի վերջում ուրիշները կարգի չբերեին, չբարեփոխեին ու նոր տպարան չբաց անեին»⁶: Երեմիայի տպարանը, անկախ իր անկատարությունից և այն բանից, որ չէր կարող իր որակներով մրցակցել Ամստերդամում, Լիվոռնոյում և Մարսելում 1660-1670-ական թթ. գործող ոսկանյան տպարանների արվեստի հետ, այսուհանդերձ, երևույթ էր հայ մշակութային կյանքում: Թեկուզ և նրանով, որ այն վերածնեց տպագրական գործը Կ. Պոլսում՝ թոթափելով ավելի քան հարյուրամյա վաղեմության փոշին և, այսպիսով, գաղթօջախն ընդհուպ պատրաստելով ոչ միայն մշակութային, այլև XVIII դ. դավանական մարտահրավերների առջև: Հիրավի, Երեմիայից հետո XVII դ. և XVIII դդ. սահմանագծին սկսեց գործել Գրիգոր Մարգվանցու տպարանը, որ այդուհետև ապահովեց Կ. Պոլսում հայ տպագրության շարունակականությունն առ այսօր: Մարգվանցին հիմք դրեց հայ գրքի տպագրության փորագրական եղանակին: Հակոբ Նալյանը, ինչպես նշում է հետազոտողը, Մարգվանցու տպարանին է վերագրում 17-րդ դ. գիրք, այդ թվում՝ Ջենոբ Գլակի «Ազաթանգեղոս» (1709), «Գիրք պատմութեանց յերկրին Տարօնոյ» (1719), Հովհան Ոսկեբերանի «Ներբողեանք» (1734) և այլն⁷:

Մարգվանցուց առաջ Կ. Պոլսում տպագրական գործին ձեռնամուխ եղան հայ կաթոլիկները: Հավանաբար, կաթոլիկներին սնեոված՝ օսմանյան իշխանությունների վտանգավոր ուշադրությունը շեղելու նպատակով նրանք

³Նույն տեղում, էջ 14:

⁴Յարման Ա., նշվ. աշխ., էջ 189:

⁵Լեո, նշվ. աշխ., էջ 189:

⁶Յարման Ա., նշվ. աշխ., էջ 189:

⁷Իշխանյան Ռ., Հայ գիրքը, Ե., 1981, էջ 73:

որպես հրատարակության վայր էին ցույց տալիս մերթ Ամստերդամը, մերթ Լիվոռնոն և մերթ Մարսելը՝ վերջին երկու դեպքերում տպարանի անունը ևս յուրացնելով և նշելով՝ տպարան Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի։ Ռ. Բշխանյանը կարծում է, որ Մարսելի Ոսկանյան տպարանի պարագաների մի մասը 1686-ի կողմերը բերվել էր Կ. Պոլիս, որտեղ և կաթոլիկ հայերը սկսեցին գրքեր տպագրել Սարգիս Եվդոկիացու (Սահէթճու) տնօրինությամբ⁸։ Այս տպարանում են տպագրվել «Գիրք պատմութեան կայսերն Փոնցիանոսի», Վ. Այգեկցու «Աղուէսագիրք» գրքերը և այլն։ Այս տպարանն իր գործունեությունը շարունակել է մինչև 1710-ական թթ.։ Դժվարանում ենք, սակայն, համաձայնել Ռ. Բշխանյանի այն մտքին, թե «կաթոլիկական այս տպարանի մասն է կազմել (կամ գուցե հենց նույնն է եղել) 1705-1718 թթ. մի շարք գրքերի վրա Պետրոս Լատինացու և Կոստանդնուպոլսի Պեկոլլի (իմա՝ Պեյոլլու – Խ. Ա.) թաղամասի անուններով հիշատակվող տպարանը»⁹։ XVII դ. վերջին և XVIII դ. սկզբներին հայ էջմիածնականների ու կաթոլիկների սուր տարաձայնությունների պայմաններում այսպիսի մերձեցումը կամ նույնացումը, կարելի է կարծել, հնարավոր չէր։ Իր հերթին, Լեոն, հղելով Շրյոդերին, ենթադրում է, որ Կ. Պոլսում 1700-1705 թթ. գործած տպարանը տեղափոխվել էր Լիվոռնոյից, որի արդյունքները կրում են նույն՝ «ի տպարանի Ս. Էջմիածնի և Ս. Սարգիս զօրաւարի» վերտառությունը։ Պետք է կարծել, որ խոսքը վերաբերում է 1680-ականի 2-րդ կեսին Մարսելից Կ. Պոլիս բերված տպարանին, որը շարունակել է իր գործունեությունը XVIII դ. սկզբներին։

XV-XVII դդ. հայկական տպարաններում տպագրված գրքերը գերազանցապես կրոնական բնույթ ունեին, և դա հասկանալի է կրոնական գաղափարախոսության, ազգային կյանքում եկեղեցու ունեցած կարևոր դերակատարության և որպես դրա արդյունք՝ բուն իսկ տպագրիչների՝ հոգևոր դասին պատկանելու իրողությամբ։ Անշուշտ, տպավորիչ է նաև աշխարհիկ բովանդակության արդյունքների քանակը՝ Աշխարհացույց, Այգեկցու առակները, պարզատումարներ, Դավրիժեցի, տաղեր, քերականություններ, բառարան և այլն։ Հայ տպագրությունը դառնում է ազգապահպանության գորեղ միջոց նշված երկու՝ կրոնական ու աշխարհիկ բովանդակությունների գործա-ռությամբ իմաստով, ազգային դավանանքի պահպանության և մյուս կողմից՝ աշխարհիկ մշակույթը զարգացնելու տեսակետից։ XVIII դ. մշակութային այս ուղղություններին միանում է երրորդը՝ եվրոպական քաղաքակրթական արժեքներին ի մոտո ծանոթանալու և յուրացնելու գործընթացը, որ սկսվում է մասնավորապես թարգմանական գրականության տպագրությամբ։ Ազգային եկեղեցու զորացման համար հարկավոր էր դիմակայել կաթոլիկական եկեղեցու մարտահրավերներին, որ լավ էին ըմբռնում հատկապես Հովհաննես Կոլոտ և Հակոբ Նալյան պատրիարքները (1710-1760-ական թթ.)՝ ձեռնարկելով հենց կաթոլիկական գործիչների գործերի թարգմանական հրատարակությանը։ Դրանք սրում էին հայ եկեղեցու հետաքրքրությունը Եվրոպայում կրոնական գաղափարախոսության նկատմամբ՝ նպաստելով նաև ազգային դավանանքի պահպանության միջոցների արդիականացմանը։

XVIII դարը պետք է համարել հայ գրատպության զարգացման որակական նոր փուլը, երբ տպագրական գործը գերաճում է հրատարակչականի, այսինքն, երբ տպագրությունը դրվում է աշխատանքի որոշակի բաժանման, ծրագրի և տպաքանակի մի հայտնի չափով պահանջարկների հաշվարկի վրա։ Կ. Պոլսում այս հարյուրամյակին գործում էին Աստվածատուր դպիր Կոստանդնուպոլսեցու, Սարգիս դպրի և

⁸ Նույն տեղում, էջ 74։

⁹ Լեոն, նշվ. աշխ., էջ 414։

նրա զավակ Մարտիրոսի, Չնչին Հովհաննեսի, Մարգիս և Միքայել Մեքաստացիների, Պետրոս Լատինացու¹⁰ և այլոց տպարանները, որոնց թիվը հասնում էր երկու տասնյակի: Եվ վերջապես, այս դարում հայ իրականության մեջ անցում է կատարվում գրչագրությունից դեպի տպագրություն՝ այս վերջինի ակնհայտ և հարաճուն զերակայությամբ, որ, ի վերջո, գրքի շուկայից դուրս էր մղելու ձեռագրական մշակույթը: Մարգվանցու տպարանային գործընկերներից էր Աստվածատուր Կոստանդնուպոլսեցին, որին հիշեցինք վերը: Նրա տպարանը գործեց շուրջ 50 տարի՝ տպագրելով տասնյակ գրքեր, որոնց մեջ պետք է նշել Նարեկացու պոեմի ամբողջական հրատարակությունը: Աստվածատուր դպրի թոռն էր, ըստ Ա. Յարմանի¹¹, հռչակավոր տպագրիչ Պողոս Արապյանը (1742-1835), որի բացառիկ օժտվածության շնորհիվ նրա տպարանը մեծ վերելք ապրեց XVIII դ. վերջին տասնամյակներից: Նա էր ձուլել իր անվամբ կոչված «Արապյան» տառատեսակը: Հարկ է հիշել նրա խոշոր ծառայությունները օսմանյան գրատպությանը, երբ նա գլխավորում էր արքունի տպարանը՝ «Թաքվիմ հանե-ի ամիրե»-ն, որ հիմնվել էր 1830 թ.¹²: Այս տպարանում են տպագրվել օսմանյան առաջին պաշտոնաթերթը՝ «Թաքվիմ-ի վաքայի»-ն և սրա հայերեն տարբերակ «Լրոյ գիր» թերթը (1832-ից): Օրթաքոյի՝ նրա սեփական տպարանում են տպագրվել հայկական շատ թերթեր ու ամսագրեր՝ «Ազդարար Բյուզանդյանը», «Մեղուն», «Զվարճախոսը», «Արծուի Վասպուրակա-նը»¹³ (Կ. Պոլսի շրջան) և այլն: Իր տնական գործունեության ընթացքում Պ. Արապյանը տպագրել է ինչպես կրոնական, այնպես էլ աշխարհիկ բնույթի բազմաթիվ գրքեր՝ Ժամագիրք, Տոնացույց, Նարեկ, բառարաններ, դասագրքեր: 1780-ական թթ. սկզբներին Պողոս Արապյանը վրաց Հերակլ թագավորի պատվերով տպագրել է վրացերեն գրքեր՝ ձուլելով վրաց տառատեսակներ¹⁴:

XIX դ. Կ. Պոլսի հայկական տպագրության պատմության մեջ մյուս երևելի դեմքը Հովհաննես Մյուհենտիսյանն էր (1810-1891), որը նախապես ճանաչում էր գտել իր ոսկերչական վարպետությամբ, այլև երաժշտական նոտաներ ձուլելու ինքնատիպ կարողությամբ (ձուլել է իր ուսուցիչ Համբարձում Լիմոնճյանի նոտաների կադապրները): 1844 թ. Մյուհենտիսյանը հիմնել է իր տպարանը, որը տասնյակ տարիների ընթացքում տպագրելու էր շուրջ 200 անուն գիրք, օսմանյան պաշտոնական հրատարակություններ, մաքսային դրոշմներ և այլն: Նրա տպարանի արդյունքները նշանավորեցին հայ տպագրական մշակույթի զարգացման նոր փուլը, որ բնութագրվում է

¹⁰Զարբհանալեան Գ., Պատմութիւն հայկական տպագրութեան, Վենետիկ, 1895, էջ 168-169:

¹¹Յարման Ա., նշվ. աշխ., էջ 189:

¹²Желтяков А. Д., նշվ. աշխ., էջ 44:

¹³Հայոց պարբերական մամուլը: Լիակատար ցուցակ հայ լրագրության: Կազմ. Լևոնյան Գ., Ե., 1934, էջ 5, 8-9:

¹⁴Իշխանյան Ռ., նշվ. աշխ., էջ 80:

արվեստի նրբությամբ ու տպագրական մատուցման ձևերի բազմազանությամբ: Նրա տպարանում են լույս ընծայվել տոնացույցներ, օրացույցներ, 1863 թ. Ազգային սահմանադրությունը, Ս. Հեքիմյանի «Տաղբը», Մ. Թադիադյանի

«Մոս եւ Սոնդիպի» պոեմը և այլն¹⁵: Իր տպագրած մամուլի շարքում պետք է հիշել «Հայաստանը», «Բուրաստանը», «Նոյան աղավին», «Աստղիկ արևելյանը», «Ժամանակը», «Արևելյան փողը» և այլն: Հայ մամուլի հետ համագործակցությունը Մյուհենտիսյանը շարունակել է մինչև 1870-ականի կեսը, և հավանաբար, այս ժամանակից էլ հիմնականում տպագրել է օսմաներեն գրքեր՝ իր մրցակից Արապյան տպարանի հետ միասին՝ և իր հերթին, մեծապես խթանելով օսմանյան գրահրատարակչական գործի արդիականացումը:

XIX դ. 2-րդ կեսին հայկական տպարանների քանակը Կ. Պոլսում էլ ավելի բազմացավ՝ կապված հայ ինքնուրույն և թարգմանական գրականության զարգացման հետ: Այս շրջանի տպարանների մեջ պետք է հիշել Կ. Ություճյանի «Մասիս» տպարանը, որտեղ տպագրվում էր նրա հանրահայտ համանուն թերթը մինչև 1884 թ.: Այստեղ լույս տեսան «Երկաթե դիմակով մարդը», «Հայ պատրիարք մը առաքինի ի Պասթիլ» (երկուսն էլ Ավետիք պատրիարքի մասին), «Քաղաքական տնտեսություն», «Սահմանադրություն Օսմանեան պետության» (1877) և այլ գրքեր: 1850-1870-ական թթ. հայտնի էր Ռուբեն Քյուրքճյանի տպարանը, որը տպագրում էր ոչ միայն լեզվաբանական ու փիլիսոփայական գրքեր ու բառարաններ, այլև պարբերական հրատարակություններ: 1862 թ. Ճանիկ Արամյանը Փարիզից Կ. Պոլիս տեղափոխեց իր տպարանը, որոնց մեջ որակ էր կազմում գեղարվեստական գրականությունը: Ռ. Քյուրքճյանը և Ճ. Արամյանը նրբազեղություն տվեցին գրատպության արվեստին, որ մրցակցային տրամաբանությամբ խթանում էր նաև այս տասնամյակներին Կ. Պոլսում գործող այլ հայկական տպարանների որակները:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում արևմտահայերի տպագրական երկրորդ խոշոր կենտրոնը Զմյուռնիան էր և շատ կողմերով հենց այս հանգամանքով պայմանավորված՝ Օսմանյան Թուրքիայում հայ մշակույթի մյուս խոշոր կենտրոնը՝ Կ. Պոլսից հետո: Զմյուռնիայում հայկական տպագրության սկզբնավորումը ևս, ինչպես Կ. Պոլսում, պետք է առնչվեր հայ եկեղեցու և Հռոմի միջև ստեղծված փոխհարաբերություններին: Կաթոլիկ եկեղեցու, ասել կուզի՝ եվրոպական տերությունների միջոցով արևելյան բռնակալություններից Հայաստանը ազատագրելու ձգտումը, որ հատկապես ուրվագծվեց XVI դ.՝ կաթոլիկոսների կողմից Հռոմին հարաբերվելու ջանքերով, հանդիպում էր պապերի համակրանքին, սակայն դավանական պարտադրանքների գնով: Հայ եկեղեցու (ինչպես և ողջ արևելյան եկեղեցիների) դավանական ինքնուրույնությունն այս տեսակետից Հռոմը դիտում էր որպես հերձվածի ինքնուրույնություն, որն անհրաժեշտ էր

¹⁵ Յարման Ա., նշվ. աշխ., էջ 190:

արմատախիլ անել՝ կաթոլիկության անվերապահ ճշմարտացիության հիմքով: Եվ այս էր պատճառը, որ Հռոմի ներկայությունը զգացվում է XVI-XVII դդ. Եվրոպայում ծավալված հայ գրատպության պատմության գրեթե բոլոր դրվագներում, որտեղ հայ տպագրիչները, սկսած Աբգար Թորատեցուց մինչև Ոսկան Երևանցի և նրանց հետևորդները, շարունակելով մնալ ազգային եկեղեցու հավատարիմ զավակներ, գոնե գործնական հարաբերությունների հարցում, հարկադրված էին ինչ-ինչ զիջումներ անել Հռոմին: Այս իմաստով շատ ուշագրավ են Աբգարի՝ 1565 թ. Վենետիկում տպագրած «Խառնայինթուր տումարի գեղեցիկ եւ պիտանի» վերնագրով գրքում զետեղված երկու պատկերները: Առաջինում Աբգարն է իր որդու հետ՝ պապի և կարդինալների մոտ, հայերեն տպատառերը ձեռքին, իսկ մյուսում դարձյալ Աբգարն է՝ Վենետիկի դոմի և նրա մերձավորների առջև¹⁶: Կարելի է կարծել, որ զույգ պատկերներն էլ ունեն անցաթղթի արժեք, դրանք պետք է հուշեին պապական գրաքննիչներին ոչ միայն հայ տպագրիչի սոցիալական նշանակալիությունը, այլև այն, որ նա՝ իբրև տպագրիչ, չի մեղանչում Հռոմի եկեղեցու առջև և վայելում է իր՝ պապի, ինչպես և աշխարհիկ տիրակալների վստահությունն ու հովանավորությունը: Պակաս ուշագրավ չէ նաև այն, որ նշված զույգ պատկերները Աբգարը զետեղեց նաև 1565-1566 թթ. տպագրված Մադոնսարանում: Կնշանակի, հիշյալ նկարները Աբգարի համար շարունակել են պահպանել իրենց անցագրային նշանակալիությունը՝ ի ողորմման կասկածող դավանական անհանդուրժողականության: Այնուհետև Աբգարն իր տպարանը փոխադրել է, ինչպես տեսանք, Կ. Պոլիս, որ կարելի է բացատրել Վենետիկում ու Հռոմում դավանական անբարենպաստ կլիմայով և, մյուս կողմից՝ Կ. Պոլսի հայ գաղթօջախի մշակութային պահանջ-մունքներով: Հայ տպագրության պատմության մեջ դավանական գործոնի նշանակալիությունն ավանդության որակներ էր ձեռք բերել արդեն XVII դ., որի բովանդակության մեջ այստեղ չհտրանալով՝ նշենք միայն, որ այն կապվում է Զմյուռնիայում հայ տպագրության սկզբնավորման խնդրին: Հայտնի է, որ Ոսկան Երևանցու 1667-1673 թթ. տպարանները Ամստերդամում, Լիվոռնոյում և Մարսելում օգտագործում էին Տպարան Ս. Էջմիածնի և Ս. Մարգսի անունը: Այդ նույն անվանումն ուներ՝ այս անգամ օսմանյան իշխանությունների ճնշումներից պաշտպանվելու նպատակով, հայ կաթոլիկների տպարանը Կ. Պոլսում, 1690-ական թթ., երբ իբրև տպագրության տեղ նշում էին ոսկանյան տպարանները՝ Ամստերդամում, Լիվոռնոյում և Մարսելում: Հավանաբար,

¹⁶ Իշխանյան Ռ., նշվ. աշխ., էջ 40:

այս նույն հանգամանքներն էին հաշվի առել ոսկանյան տպագրիչները 1676 թ.՝ Մարսելում տպագրած Մաշտոցի տպագրավայր նշելով Ջմյուռնիան¹⁷:

Իրականում Ջմյուռնիայում հայ տպագրությունը սկիզբ է առնում Մահտեսի Մարկոսի տպարանով, 1759-1762 թթ., որտեղ տպագրվեցին երեք գիրք՝ «Մեկնութիւն ժամանակագրութեան», «Խորհրդատետր» և «Եզնիկ»¹⁸:

Ջմյուռնիայում գրատպությունը պետք է նորոգվեր յոթ տասնամյակ տևած ընդհատումից հետո՝ ամերիկյան «Պորտ» ընկերության բողոքական քարոզիչների կողմից: 1833-1852 թթ. նրանք տպագրեցին կրոնական և ուսումնական բնույթի մի շարք գրքեր, այդ թվում՝ անգլերեն-հայերեն քերականություն, հեգարան: Տպարանը փոխնիփոխ կոչվում էր Հուման Հալլոքի և Գուլիելմոս Գրիֆիտի անուններով: Այստեղ տպագրվեց նաև «Շտեմարան պիտանի գիտելեաց» ամսագիրը 1839-1846 թթ.՝ գուտ ավետարանական ճշմարտությունների բողոքական մեկնաբանություններով: Թանգիմաթի շրջանում, 1830-ականի վերջին և 1840-ականին սկսեցին գործել նոր տպարաններ՝ նախ, Պողոս Թաթևիկյան վիմագրատունը, որ առավել հայտնի է իր տպագրած օտարալեզու արդյունքներով: Այս տպարանում է տպագրվել «Միմոս» գավեշտական հանդեսը՝ 1908 թ., ուստի չի կարելի բացառել, որ այն գործել է նաև 1910-ական թթ.: Այս տասնամյակից հայտնի է Ստ. Պապոյանի տպարանը, որտեղ իր առաջին տարիներին տպագրվում էր «Արշալույս արարատյան» թերթը՝ սկսած 1840 թվականից, որից հետո այն դարձել է նշված թերթի սեփականությունը՝ կոչվելով նրա անունով: Ջմյուռնիայի Ս. Մեսրոպյան վարժարանի տպարանը ևս այս նույն շրջանի կրթական ու բարեսիրական շարժման արդյունք էր՝ նվիրաբերված տրիեստաբնակ Պետրոս Յուսուֆյանի կողմից: Այստեղ տպագրվեցին Հովհ. Վանանդեցու «Ոսկի դար Հայաստանի» գիրքը, Ֆենելոնի «Արկածք Արիստովնոսի» թարգմանական գործը և այլ գրքեր, դասագրքեր, բարոյախրատական հրատարակություններ: «Արագածունյաց» լուսավորական ընկերությունը նույնպես ուներ իր տպարանը, որի անունով հրատարակվեցին մի քանի գրքեր, ինչպես և Խ. Մելիքսեյումյանի «Հայրենասեր» թերթը:

1845 թ. հունիսի հայտնի հրդեհը Ջմյուռնիայում նյութական ծանր հարված հասցրեց հայ համայնքին, հրո ճարակ դարձան Հայնոց թաղի շատ տներ, ազգային, բարեգործական ու կրթական շատ հիմնարկների սեփականություններ: Այրվեցին նաև Ստ. Պապոյանի և «Արշալույս արարատյանի» տպարանները¹⁹: Կրած վնասներից չկարողացավ ուշաբերվել «Արագածունյաց» ընկերությունն՝ իր «Հայրենասեր» թերթով:

Հայ տպագրության պատմության մեջ առանձնահատուկ կարևորությամբ աչքի է ընկնում Ջմյուռնիայի Տետեյան տպարանը, որ գործել է 1853-1892 թթ.: Իր արդյունավետ և համազգային ճանաչման հասած գործունեության համար տպարանը պարտական է ականավոր մտավորական, տպագրիչ ու թարգմանիչ Տիգրան Հարություն Տետեյանին (1832-1868): Հարկ է հիշել նրա կատարած անչափ կարևոր դերը հայ թարգմանական գրականության զարգացումը հրատարակչական գործին լծողելու, ազգային մշակույթի այս երկու կողմերի սերտաձուլը արդյունավորելու ուղղությամբ: Տպագրապետը փաստորեն նպաստեց զմյուռնահայ թարգմանական փայլուն դպրոցի կայացմանը՝ տպագրելով Գր. Չիլինկիրյանի, Մ. Մամուրյանի, Մ. Նուպարյանի, իր եղբայրներ Ա. Կ. Տետեյանի, Հ. Հ. Տետեյանի և այլոց թարգմանական

¹⁷ Ալպոյաճյան Ա., Ջմյուռնիո տպարանները (Պատմա-բանասիրական հանդես, 1964, N 2, էջ 69):

¹⁸ Նույն տեղում, էջ 71-72:

¹⁹ Նույն տեղում, էջ 78:

գործերը եվրոպական (հիմնականում ֆրանսիական և անգլիական) գրականությունից՝ քաջալերելով նրանց նաև նյութապես: Զմյուռնահայերի այս տպարանում տպագրվեցին նրանց թարգմանությունները Վոլտերից, Մոլիերից, Շատոբրիանից, Հյուգոյից, Դյումայից, Շեքսպիրից, Սկոտից և շատ այլ հեղինակներից: Ինքը՝ Տ. Տետեյանը ևս վերոհիշյալ դպրոցի ներկայացուցիչներից մեկն էր: Իր թարգմանությամբ և սեփական տպարանում նա լույս ընծայեց «Հազարումեկ գիշերը» (արաբական հեքիաթների ժողովածու), Մոլիերի «Ագահը», «Ակամայ բժիշկը», «Մէրը բժիշկ է» կատակերգությունները, Ալ. Դյումայի «Մոնթե Զրիսթոն» և այլ գործեր: Մասնավորապես, Տետեյան եղբայրների թարգմանական ու հրատարակչական գործունեությունը սկիզբ է առնում նրանց խմբագրած «Արփի արարատյան» ամսագրի տպագրությամբ (1853-1856): Տ. Հ. Տետեյանն իր տպարանը սարքավորել էր Եվրոպայից ներմուծված տպագրական լավագույն տեխնիկայով, ուստի և դրա արդյունքները իրավունք ունեին համեմատվելու ժամանակի ճանաչված եվրոպական հրատարակությունների հետ: Տետեյան տպարանում են հրատարակվել 1850-1870-ական թթ. գրեթե բոլոր զմյուռնահայ պարբերականները, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ և այլն: Հիրավի, Տետեյան տպարանն ազդեցիկ նշանակություն ունեցավ զմյուռնահայ մշակույթի զարգացման վրա, որ առաջ էր մղելու նոր բարձրացող սերունդը: Մի հայտնի չափով այդ տպարանի թողած ազդեցությամբ ու հմայքով պետք է բացատրել նաև 1850-ական թթ. Ս. Մեսրոպյանի երեք սաների հրատարակած «Թութակ Հայկազեան» ամսաթերթը, նաև Մ. Նուպարյանի «Երկասէր» պարբերականը, որի մամուլը պատանի խմբագիրը ստացել էր Տետեյան տպարանից:

1870-1880-ական թթ. և հետագա տասնամյակներին Զմյուռնիայում հիմնվեցին բազմաթիվ նոր տպարաններ, որոնց գործունեությունն ու զնահատականը դուրս է մեր այս ուսումնասիրության շրջանակից:

АРМЯНСКОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО
В КОНСТАНТИНОПОЛЕ И СМирНЕ (1567-1860-ые гг.)

ХАРАТЯН А. А.

Резюме

Начало армянского книгоиздательства в Константинополе восходит к 1567-1569 гг., когда были изданы шесть книг Абгара Тохатеци, которые в основном были религиозного характера. Через 100 с лишним лет, в 1677 г. Еремия Кёмурчян продолжил дело, начатое Абгаром Тохатеци, издав две книги и одну карту. И лишь в XVIII в. в Константинополе было создано несколько типографий, число которых приумножилось в последующие десятилетия. В конце XVIII – первой половине XIX вв. среди константинопольских издателей особо выделялись Арапян и Мухантесян, типографии которых отличались высоким полиграфическим уровнем.

Основоположником армянского книгоиздательства в Смирне был Махтеси Маркос, типография которого действовала в 1759-1762 гг.

В дальнейшем, в 40-х годах XIX в. в Смирне была открыта типография П. Татикяна, затем – типографии Ст. Папояна, школы Св. Месропяна и газеты “Аршалуйс Араратян”. Типографское дело в Смирне достигло особого расцвета во второй половине XIX в. благодаря деятельности братьев Тетяян.